ԳԱԱ-Ն ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է ՏՈՏԱԼԻՏԱՐԻԶՄԻՆ

Երեկ ԳԱԱ Նախագահության փակ նիստում քննարկվել են ԳԱԱ կառուցվածքային բարեփոխումներին ուղղված հարցեր, մասնավորապես՝ ինստիտուտների խոշորացման հարցը, որ արդեն մեկ տարի խոսակցությունների փուլում էր:



Ըստ Լենսեր Աղալովյանի այս հանձնարարում ամեն ինչ գլխիվայր է:

Իվերջո, մշակվել է մի փաստաթուղթ, ըստ որի որոշվել է իրար միացնել ԳԱԱ որոշ ինստիտուտներ ու կենտրոններ: Բնական գիտությունների բաժանմունքում կկատարվեն հետևյալ փոփոխությունները. Լ. Մնջոյանի անվան նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը կմիանա Մոլեկուլի կառույցի ուսումնասիրությունների կենտրոնին: Ի դեմ, այս միացման մասին խոսակցություններ կային դեռևս փետրվար ամսին, եւ կենտրոնի տնօրեն Սուրեն Մամյանը հաղորդեց, թե որքան անհամոզիչ եւ գիտության համար վտանգավոր կարող է լինել այս միացումը: Երեկ մեզ հետ զրույցում ՊրՆ Մամյանն ասաց, որ նախագահությունում իրենց խոստացել են ձեւակնորեն միացնել, սակայն թողնել որոշ առանձին, ինքնուրույն կենտրոն: Ինչի մասին, սակայն, շատաց բաժանմունքի ղեկավար, ակադեմիկոս-քարտուղար Վիլեն Հակոբյանը: Մյուս միացումը վերաբերում է Միկրոբիոլոգիայի ինստիտուտին եւ Սանրեների ավանդադրման հանրապետական կենտրոնին: Այս 2 կազմակերպությունները գտնվում են Աբովյան քաղաքում, բայց առանձին շենքերում են տեղակայված, այնպես որ՝ այս դեպքում նաեւ մի ամբողջ շենք է ազատվում:

Այս բաժանմունքում կմիանան նաեւ Կենդանաբանության ու Հիդրոէկոլոգիայի եւ ձկնաբանության ինստիտուտները: Հիշեցնենք, որ վերջինս Սեւանից տեղափոխվել էր Երեւան՝ ԳԱԱ հիմնարար գրադարանի շենք, իսկ Սեւանի շենքը վաճառվել էր:

Կմիացվեն նաեւ Գառնիի երկրաֆիզիկական դիտարանը եւ Երկրաբանական գիտությունների ինստիտուտը:

Հայագիտության եւ հասարակական գիտությունների, ինչպես նաեւ մաթեմատիկայի, մեխանիկայի եւ ինֆորմատիկայի բաժանմունքներում, մեր տեղեկություններով, փոփոխություններ չեն արվի: Իսկ ֆիզիկայի եւ աստղաֆիզիկայի բաժանմունքում կմիացվեն Գյումրիում գտնվող հատուկ փորձարարական ուղղվածությամբ 2 ինստիտուտներ, ինչպես նաեւ՝ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը եւ «Մաշտոց» ճարտարագիտական կենտրոնը:

Վ. Հակոբյանի տվյալներով, այս բոլոր փոփոխությունների հաստատումից հետո միայն նոր տնօրեններ կընտրվեն այն բոլոր ինստիտուտների համար, որոնց տնօրենները, տարիքի հետ կապված, ազատվել էին աշխատանքից: Իսկ տնօրենների ընտրության հարցում առարկություն ունի Մեխանիկայի ինստիտուտի նախկին տնօրեն, ակադեմիկոս Լենսեր Աղալովյանը: «Եթե նախկինում ինստիտուտի տնօրենն ընտրվում էր բազմաստիճան ձեւով, այսինքն՝ գիտխորհուրդը թեկնածություն էր առաջադրում, գիտական կոլեկտիվը քննարկում էր այն, բաժանմունքը փակ գաղտնի քվեարկությամբ ընտրում էր, հետո նախագահությունը հաստատում՝ փակ-գաղտնի քվեարկությամբ, արդա հիմա հարցը ուղիղ ձեւով գնում է նախագահություն»: Սա էլ, ըստ ՊրՆ Աղալովյանի, դե ֆակտո նշանակում է, որ նախագահության 9 անդամները տնօրեններին նշանակում են: Եվ դա այն դեպքում, երբ «Նրանք ներ մասնագետներ չեն ու հաշվի էլ չեն առնում մասնագետների կարծիքը: Իսկ դա տոտալիտարիզմ է նշանակում, վերադարձ դեպի հին, երբ տնօրեններին նշանակում էին, հետո մեկ տարում 5 հոգի փոխվում էր, որովհետեւ գործից բան չէին հասկանում»: Ժամանակին այս նոր ձեւին ՊրՆ Աղալովյանը նախագահությունում դեմ է արտահայտվել, իսկ նրան ոչատասխանել են, որ նախագահությունը լիազորված մարմին է եւ իրավունք ունի ինքը որոշելու այդ հարցը: «Բայց դա դեմոկրատական մոտեցում չէ. կաստ բան է կատարվում»,- ասում է ակադեմիկոսը:

Հիշեցնենք՝ ԳԱԱ Նախագահությունը որոշել էր նախկին տնօրեններին թողնել իբրեւ խորհրդականներ եւ ոչահամաձայնել նրանց նախկին աշխատավարձը: Պրն Աղալովյանն այս առիթով ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ տնօրենի աշխատավարձը գրեթե հավասար է առաջատար գիտաշխատողի աշխատավարձին՝ խոսքը 40-45 հազար դրամի մասին է: Իսկ Նախագահության ղեկավար կազմը մինչեւ 300 հազար դրամ աշխատավարձ է ստանում. «Ամեն ինչ գլխիվայր է, եթե ուզում եք այս ամենի մեջ իմաստ փնտրել՝ արդարություն է»:

ՀԱՍՄԻԿ ԲՈՒԴԱՂՅԱՆ